Երկամյա առաջընթացի զեկույցների և ՋԳ ազգային կադաստրների մշակման ինստիտուցիոնալ հարցերը

Ա. Մուրադյան

Ինստիտուցիոնալ համակարգի գերակայությունը ջերմոցային գազերի կադաստրի մշակման գործընթացում

- Մարդածին արտանետումների և կլանիչների գնահատման, ինչպես նաև գույքագրման հաշվետվությունների և արխիվացման վերաբերյալ տեղեկատվության համակագրման համար պետք է ներառվեն երկրում գործող բոլոր ինստիտուցիոնալ, իրավական, և կանոնակարգային կարողությունները:

- Ինստիտուցիոնալ կարողությունների ամրապնդումը քաղաքական կամքի դրսևորման գործողությունների իրականացման և իրագեկման համար անհրաժեշտ հանգամանք է: Այդ կարողությունները և դրանց բարելավումը ինքնանպատակ չէ:

Այն պետք է ուղղված լինի «նպատակ - ենթանպատակներ – բացթողումների և խոչընդոտների բացահայտում – գործողություններ, որոնք պետք է լրացնեն բացթողումները և խոչընդոտները– նպատակին հասնելու ժամանակացույցի հստակեցում, հստակ գնահատման չափանիշների մշակում և հաստատում» շղթայի որևէ հատվածի իրականացումը ապահովելու համար:

Ինստիտուցիոնալ համակարգի հիմնական սկզբունքային խոչընդոտները ՋԳ մշակման գործընթացում

- Խնդիրներ, կապված գործընթացների համակարգման հետ
- Տվյալների հավաքագրման դժվարությունները, կապված միասնական դասակարգման բացակայության հետ
- Խնդիրներ, որոնք կարող են առաջանալ համապատասխան լիազորություններ և կարողություններ չունեցող աշխատանքային թիմի հետ:

Հայաստանում առկա ինստիտուցիոնալ մեխանիզմները

- Հայաստանի Հանրապետությունը ստորագրել է Միավորված ազգերի կազմակերպության Կլիմայի փոփոխության շրջանակային (ՄԱԿ ԿՓՇԿ) կոնվենցիան 1992թ. հունիսի 13-ին և վավերացրել է այն որպես Հավելված I-ում չընդգրկված երկիր 1993թ. մայիսի 14-ին: 2002թ. դեկտեմբերի 26-ին Հայաստանը վավերացրել է ՄԱԿ ԿՓՇԿ՝ Կիոտոյի արձանագրությունը՝ այսպիսով միանալով միջազգային ջանքերին՝ պայքարելու կլիմայի փոփոխության դեմ:
- Դոհայի ուղղումը և Փարիզյան համաձայնագիրը վավերացվել են 2017թ. փետրվարի 9-ին:

Հայաստանում առկա ինստիտուցիոնալ մեխանիզմները

- “Մի շարք բնապահպանական միջազգային կոնվենցիաներից բխող՝ Հայաստանի Հանրապետության պարտավորությունների կատարման միջոցառումների ցանկը հաստատելու մասին” ՀՀ կառավարության որոշումներ (N115, 1840-Ն, 1594-Ն և վերջինը՝ արձանագրային որոշում 08.12.2016թ. N49-8). Վերջին՝ N49-8 որոշումը, ի տարբերություն նախորդ որոշումների, սահմանում է Ջերմոցային գազերի մարդածին արտանետումների ազգային կադաստրների մշակումը երկամյա պարբերականությամբ և շարունակական:
- Այս որոշումներում, մասնավորապես, ամրագրվել են շահագրգիռ գերատեսչությունները, որոնք պետք է ներգրավված լինեն ջերմոցային գազերի կադաստրի մշակման գործընթացում: ***Սակայն հստակեցված չէ, թե ինչ չափով և որ մասով է յուրաքանչյուր գերատեսչությունը ներգրավվում և ինչի համար է պատասխանատու: Բացի այդ, ընդգծված ժամանակահատվածը ենթադրում է աշխատանքային միանվագ մոտեցում և բոլորովին չի նպաստում ոչ միայն շարունակականությանը, այլ նաև տվյալների արխիվացմանը, մասնագետների պահպանմանը և ի վերջո, կարողությունների հզորացմանը:***

Հայաստանում առկա ինստիտուցիոնալ մեխանիզմները

- ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի պարտավորությունների կատարման նպատակով մշակվել և ՀՀ կառավարության հավանության է արժանացել «Ազգային մակարդակով սահմանված նախատեսվող գործողությունները/ներդրումը (INDC)» փաստաթուղթը, որը ըստ էության հայեցակարգային փաստաթուղթ է, որտեղ նախանշված են երկրի անելիքները, այդ թվում նաև ինստիտուցիոնալ համակարգում:

- INDC-ի փաստաթղթում կարողությունների ամրապնդման հարցում կարևորվել է ***«կլիմայի փոփոխության հիմնախնդիրներին առնչվող բնագավառներում կրթության, կադրերի պատրաստման կայուն գործընթացի և միջազգային, այդ թվում տարածաշրջանային համագործակցության հիմնումը»:*** Այս գործընթացը պատշաճ կերպով իրականացնելու դեպքում երկիրը կունենա ամուր կադրային թիկունք, որը կապահովի կլիմայի փոփոխության հետ առնչվող բոլոր ասպարեզներում, այդ թվում ինստիտուցիոնալ համակարգում, **մասնագետներով համալրելու կարևորագույն խնդիրը:**

- առանձին կետով կարևորված է նաև **«Չափողականության, հաշվետվության ու հավաստագրման» համակարգի ներդրման խնդիրը, մասնավորապես բաց և մատչելի տեղեկատվական համակարգի ստեղծումն ու կատարելագործումը, ինչը անմիջականորեն կապված է ինստիտուցիոնալ համակարգից:**

Հայաստանում առկա ինստիտուցիոնալ մեխանիզմները

02.10.2012թ. ՀՀ վարչապետի թիվ 955-Ա որոշմամբ ստեղծվել է **ՄԱԿ-ի “Կլիմայի փոփոխության մասին” շրջանակային կոնվենցիայի պահանջների ու դրույթների կատարման միջգերատեսչական համակարգման խորհուրդ** և հաստատվել միջգերատեսչական համակարգման խորհրդի կազմը և աշխատակարգը:

Սակայն, **միջգերատեսչական համակարգման խորհուրդի** ***պարտավորությունների սահմանումը տրված է ընդհանուր տեսքով և չի մասնակիացված որ գերատեսչությունը կոնկրետ որ մասով է պարտավորություն իրականացնում, խորհրդի համար ներկայիս իրավիճակում չափազանց դժվար է, եթե ոչ անհնարին, համակարգել ազգային հաղորդագրությունների և երկամյա զեկույցների մշակման գործընթացը*** և իրականացնել ստանձնած պարտավորությունների կատարման գնահատումը:

Հայաստանում առկա ինստիտուցիոնալ մեխանիզմները

- ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմում տեղի են ունեցել կառուցվածքային փոփոխություններ, որի արդյունքում ստեղծվել է կլիմայի փոփոխության և մթնոլորտային օդի պահպանության քաղաքականության բաժին, որը հանդիսանում է շրջակա միջավայրի պահպանության քաղաքականության վարչության բաժիններից մեկը: Բաժնի առկայությունը հնարավորություն կտա կանոնակարգել և շարունակական հիմունքներով համակարգել և իր լիազորությունների սահմաններում իրականացնել մի շարք խնդիրներ:

Հայաստանում առկա ինստիտուցիոնալ մեխանիզմները

- ՀՀ կառավարության 2016թ. դեկտեմբերի 8-ի նիստի N 49 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած «ՀՀ կողմից վավերացրած մի շարք բնապահպանական միջազգային կոնվենցիաներից բխող՝ ՀՀ պարտավորությունների կատարման միջոցառումների» ցանկի ԿՓԾԿ մասով առնվազն երկու կետ անմիջականորեն ենթադրում են ինստիտուցիոնա կարողությունների զարգացմանը և ամրապնդմանը.
- *Կետ 8. «Չափողականության, հաշվետվայնության ու հավաստագրման (MRV) համակարգի հիմնում»*
- *Կետ 9. Կլիմայի փոփոխության խնդիրների լուծմանը նպատակաուղղված տեխնոլոգիաների զարգացման և փոխանցման գործընթացի ձևավորում ու հետևողականորեն ամրապնդում*

Ինստիտուցիոնալ համակարգի բարեփոխումներ/IPCC-ին առաջարկում է

Վերլուծել գույքագրումը կառավարող ընթացիկ թիմը և հստակեցնել հետևյալ հարցադրումների պատասխանները.

-Գույքագրում իրականացնող գործակալություն/ UNFCCC Focal Point (անձ) UNFCCC Focal Point գերատեսչություն- դրանց միջև առկա կապը (եթե դրանք տարբեր են)

- Թիմի համակարգողի, թիմում ընդգրկված առանցքային ոլորտների առաջնորդների դերը, անունը, կազմակերպությունը, կոնտակտային տվյալները:
- Թիմում պետք է ընդգրկված լինեն նաև տվյալների արխիվացման գործընթացների համակարգող, որակի գնահատման և որակի հսկման համակարգող, անորոշությունների վերլուծման համակարգող, ինչպես նաև ՋԳ քաղաքականության մասնագետ՝ IPCC-ի քաղաքականության և կարողությունների ամրապնդման գործընթացների համապատասխանեցման ապահովման նպատակով

Ինստիտուցիոնալ համակարգի բարեփոխումներ/IPCC-ին առաջարկում է

–կարևորել ոլորտային դերը և մեխանիզմները, որոշակիացնել դրանց և հիմնական գերատեսչության միջև առկա կապի, ինչպես նաև աշխատանքային հանդիպումների և տվյալների տրամադրման, տվյալների չափման կամ հաշվարկման իրավական և նորմատիվամեթոդական հիմքերը

Ինստիտուցիոնալ համակարգի բարեփոխումներ/IPCC-ին առաջարկում է

- Յուրաքանչյուր ոլորտի համար մշակել ՋԳ գույքագրման հետ կապված ինստիտուցիոնալ մեխանիզմների բարելավման միջոցառումների ցանկ և դասակարգել դրանք ըստ գերակայության
- Միջոցառումների դասակարգումը ըստ գերակայության պետք է հետևի գույքագրման շրջապտույթից՝ «պլանավորում-հավաքագրում-գնահատում-հաշվետվության մշակում-լրամշակում- ավարտում» և յուրաքանչյուր փուլի ավարտման ժամկետներից

Ինստիտուցիոնալ համակարգի բարեփոխումներ/IPCC-ին առաջարկում է

- Արխիվացման համակարգի ստեղծումն ու ճիշտ վարումը ապահովում է ազգային կադաստրների բարձր որակը
- Արխիվացման գործընթացները իրականացնելու համար գույքագրման թիմում ընգրկվում է նաև արխիվացման համակարգող, ում դերն ու պարտավորությունները հստակ ամրագրվում են
- Արխիվացվում են՝

- տվյալները և հաշվարկման աղյուսակներ և յուրաքանչյուր կատեգորիայի այլ էլեկտրոնային ֆայլերը որոնք օգտագործվել են գույքագրման համար
- QA / QC պլանը և արդյունքները/ checklists:
- առանցքային ոլորտների վերլուծության աղյուսակներ:
- ներքին եւ արտաքին վերլուծման դիտողություններն ու պատասխաններ:
- գույքագրման փաստաթղթի վերջին նախագիծը եւ վերջնական էլեկտրոնային տարբերակները (օգտագործման համար որպես ելակետ ապագայում գույքագրում արդիականացնելու համար):
- թարմացված մեթոդաբանության և տվյալներին վերաբերող փաստաթղթերը, ապագայում որպես ելակետ օգտագործելու համար) և այլն:
- արխիվացման տրամաբանությունը պետք է հստակ ներկայացված և հասանելի լինի բոլոր օգտվողների համար:

Ինստիտուցիոնալ համակարգի գերակայությունը ջերմոցային գազերի կադաստրի մշակման գործընթացում

- Ինստիտուցիոնալ համակարգի բարելավումը անհրաժեշտ է իրականացնել հիմնական ուղղություններով՝ կարճաժամկետ նպատակները իրականացնելու, երկարաժամկետ ծրագրերի լուծման համար, միասնական տեղեկատվական բազայի ստեղծման համար և այլն:

- Ինստիտուցիոնալ փոփոխությունները՝ կարող են իրականացվել՝ ամբողջ համակարգի վերափոխմամբ կամ էպիզոդիկ, կոնկրետ խնդիրների լուծմանը ուղղված: Նախընտրելի տարբերակ է մշակել ինստիտուցիոնալ փոփոխությունների՝ երկարաժամկետ ծրագիր (5-10 տարի):

Շնորհակալություն ուշադրության համար